

Ա. ՄԵՅԵԻ ԱՐԻՏԻՎ ԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Փարիզաբնակ բանասեր, «Revue des études arméniennes» հայագիտական հանդեսի քարտուղար Հայկ Պերպերյանի և Ադասի Դարբինյանի ջանքերի շնորհիվ, Հայաստանի կուլտուրայի միջազգային գրականության և արվեստի թանգարանը 1965 թ. գարնանը այդ տիկին Մեյեից որպես նվեր ստացավ Անտուան Մեյեի յուղաներկ դիմանկարը և հայագիտական արխիվային մի շարք փաստաթղթեր: Արխիվային այս նյութերը թանգարանին է հանձնել փարիզահայ ուսանող Զավեն Եկավյանը:

Դիմանկարի հեղինակն է Մ. Մաքսուդյանցը, որը Փարիզում աշակերտել է Մեյեին: Այս գործը 1911 թ. «Հուլիան»-ում հրատարակված լուսանկարի վարպետ ընդօրինակությունն է. Մեյեն կրում է կաճառականի ժապավեն. դիմանկարը վարպետ է հայկական մանրանկարներով: Նկարի հակառակ կողմում նկարիչը ֆրանսերենով գրել է. «Էր հուլիս սիրելի ուսուցիչ Ա. Մեյեին, նրա երախտապարտ աշակերտ Մ. Մաքսուդյանցից. 1 մարտի, 1912, Փարիզ»:

Բոլոր նյութերը թղթի կտորների վրա կատարված անձնական գրառումներ, ընթերցանության ժամանակ կատարված նշումներ, կարգացված լեզվաբանական դասախոսությունների հանգուցային կետերի նշումներ են՝ Մեյեի մանրագիտակցային և խիստ դժվարընթեռնելի ձեռագրով: Մեյեն հրատարակել է 24 անուն մենագրություն և մոտ 550 հոդված. ուստի մենք հավատացած ենք, որ նա դժվար թե անտիպ թողած լինի տպագրության պատրաստ որևէ ուսումնասիրություն: Այնուհանդերձ, ստացված նյութերի մեջ կան հայագիտության համար արժեքավոր, հրատարակության արժանի փաստաթղթեր: Դրանք են՝ մեր վերնադերձով՝ «Դիտողություններ Եղիշե պատմագրի բնագրի վերաբերյալ», Ղ. Փարպեցու «Թուղթ առ Վահան Մամիկոնյան»-ի հրատարակության և ձեռագրի բաղդատության արդյունքները և հայերեն 150 բառի ստուգաբանությանը վերաբերող քարտեր: Առաջին երկուսն արդեն պատրաստել ենք տպագրության, ուստի և ավելորդ է դրանց մասին խոսելը. երրորդը կարոտ է մանրակրկիտ ուսումնասիրության: Քարտերը դասավորված են հայերեն այբբենական կարգով. գլխաբառը և դրանով կապված գրաբար դարձվածքները գրված են հայերեն. նշված է բառի գործածության տեղը հայ հին մատենագրության մեջ: Հայերենագիտական հոդվածները գրելիս Մեյեն անտարակույս օգտվում էր այս քարտերից:

Թանգարանի տնօրինությունը խորին շնորհակալություն է հայտնում տիկին Մեյեին և նյութերը երևան հասցնող անձանց, խնդրելով, որ նոր առաքույթներով հարստացնեն թանգարանում բացված Մեյեի ֆոնդը:

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ»



Շրիտառարդ նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի աշխատանքն է սա:

Կտավի վրա ցերեկ կա ու գիշեր: Այս երկու ժամանակների իրար կողքի ներկայանալը ստեղծում է մի ընդհանուր տրամադրություն, որ ոչ ցերեկվանն է, ոչ գիշերվանը, այսինքն՝ և՛ նրանն է, և՛ նրանը: Դրանից բխում է մի մեծ ժամանակի առկայությունը և համընկնում է հավերժական մեծ ժամանակի գաղափարին: Հայ ժողովրդի բախտը խառնված է այդ գաղափարին, այդ հավիտենական գոյությանը:

Կտավին նկարված շրջանակից ոտքով, ձեռքով ու գլխով դուրս է գալիս կոմպոզիցիայի ամենամեծ ֆիգուրը՝ մի մանուկ:

Նույնի պլանում պատկերված են տասը ֆիգուրներ, որոնք չափազանց արտահայտիչ մարմնավորում են հայ ժողովրդի ողբերգական անցյալը: Ֆիգուրների մեջ բարձրանում է թեթև լուսավոր տոներով նկարված կյանքի դմբուխ տոհմաժողով, իսկ ավելի հեռվում շահանկազության լեռներն են և երկինքը, որի մի կողմում յաթաղան—լուսինն է՝ կախված ժողովրդի գլխին, մյուս կողմում հավիտենական արշալույսն է բացվում: Տոնային նուրբ անցումները շաղկապում են ցերեկն ու գիշերը, իսկ մանուկը, որ վահագն է, Դավիթ, Փոքր Մհեր, մարմնավորում է վերածննդի գաղափարը:

Ռ. ԴԱՎՈՅԱՆ

Ավետիքը դժվար է բաժանվում Նանտից, գալիս նստում է Անտոն շինականին մոտիկ: Սա նետ-սլաքի ծայրով գետնին շրջան է գծում.

—Երկիրն է,—ասում է Անտոն շինականը: —Գունդ է... եվ յուրյուն է տիրում: Լուռ են միայն Ավետիքին մոտիկ նստածները, իսկ քիչ հեռու՝ խոսք ու աղմուկ է ելվում:

Անձայն շրջան է Ավետիքի, Անտոն շինականի բողբոջը: Լիռության բոլորուն սահմանը մի տեղ երկարել-ձգվել է ուղիղ ճանապարհով: Եվ այդ անբառ ուղղության միջով, ուսերն անփույթ օրոր տալով՝ գալիս է ձայնարկու կանանցից ջահելը: Նա, որ աղջիկ է, սև աչքը սիրտ ծարավով լի և անունը հեղձ: Նա է՝ բերում կավե գավով: Մի ձեռքին գավն է բռնել, մյուսին՝ կանաչ ջնարակած գավաթ:

Տնքում է բան խմող ամեն ջահել, համարձակը տնքոցին խոսք է խառնում.

—Թաղումիս, հոգի, քաղցր եղանակի... —ասում է խոսքին խոսքով, կրակ տը...

սև, ահարկու ստվեր արեգակի առջև,— ու երևում է՝ ինչպես արագ-արագ բացվում-փակվում է բերանը: Ուղղվում է հետո, նայում շուրջը առանց տեսնելու և, վարմանը բան, գուժական երգ է ձայնարկում, մի մանե.

«Աստվածամոր անոր գտնողին, վա՛յ կարսնցնողին...»:

Էրենկ անոր գտնողին, վա՛յ եկեր կորսնցնողին...»:

Եվ գնում-հեռանում է անտառներ, անփույթ, շորորաբայլ: Պոկվում է տեղից Ավետիքը, վազում է ձայնարկու Ջըմբոխտի հետքով, հասնում ու փակում է ձամփան:

—Ի՛նչ էր, որ ասացիր,— գոռում է բաղկացած:

Աղջիկը նայում է Ավետիքին, դեմքն է ծամածռում արհամարհանքով: Փոքրանում է Ավետիքը, ցավ է պզուժ սրբոտի մեջ, ու ցավը փափկացնում է լեզվի կոշտությունը: Փափուկ լեզվով աղերս է անում.

— Քո արևո առեմ, ի՛նչ էր, որ արեցիր...

Ջմբոխտը կորում է գլուխը, և ձակատի, հոնքի տակից խիստ աչքը բրբրում է Ավետիքին. կարգում է անհանգիստ դեմքին բացվածը, չբացվածը ինքն է բանում: Եվ առում է,